ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՑՅԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1960-80-ԱԿԱՆ ԹԹ. ԸՆԹԱՑՈՂ ԱՅԼԱԽՈՀԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ *

ՀՏԴ 930 *DOI: 10.52063/25792652-2024.1.20-34*

ՇԱՀԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի
հայոց պատմության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
sh.harutyunyan.edu@gmail.com
ORCID: 0009-0007-8494-1113

20-րդ դարի 60-ական թվականներին ԽՍՀՄ-ում սկսեցին ձևավորվել այլախոհական շարժումներ, որոնք տարածվեցին նաև Խորհրդային Հայաստանում, որտեղ այլախոհությունը դրսևորվում էր երեք հիմնական ուղղություններով: Սակայն այլախոհական պայքարի առանցքում Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարն էր: 1966 թ. հիմնադրվում է Ազգային Միացյալ կուսակցությունը, որը, ամբողջացնելով մինչև այդ հայ հայրենասիրական շրջանակներում քննարկվող գաղափարները, իր վրա է վերցնում Հայաստանի ազատագրության և պետականության վերականգնման շարժումը: Այն իր նշանակությունն ուներ ոչ միայն Խորհրդային Հայաստանում, այլ նաև ամբողջ ԽՍՀՄ-ում:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել և բազմակողմանի ներկայացնել Հայաստանի անկախության վերականգնման պայքարի ընթացքում Ազգային Միացյալ կուսակցության դերն ու նշանակությունը:

Նպատակն իրականացնելու համար խնդիր է դրվել հետազոտել և քննարկել Ազգային Միացյալ կուսակցության հիմնադրման նախադրյալները, գործընթացը, ծրագիրը, կանոնադրությունը:

Հետազոտությունը կատարվել է պատմական, պատմահամեմատական մեթոդների միջոցով: Իրականացվել է պետական փաստաթղթերի, արխիվային նյութերի կոնտենտ վերլուծություն:

Հիմնավորվել է, որ Խորհրդային Հայաստանում ձևավորված անկախության շարժումը եղել է 17-19-րդ դարերի ընթացքում հայ ազատագրական շարժումների տրամաբանական գաղափարական շարունակությունը 20-րդ դարում՝ ընդդեմ Խորհրդային կայսրության:

Եզրակացությունն այն է, որ Խորհրդային Հայաստանում ընթացող անկախության շարժումը և դրա կազմակերպման համար հիմնադրված Ազգային Միացյալ կուսակցությունը շարունակել են մինչ այդ տարբեր դարերում ընթացած ազգային ազատագրական շարժումները՝ հասնելով հաղթական արդյունքի:

* Հոդվածը ներկայացվել է 14.02.2024թ., գրախոսվել՝ 19.04.2024թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2024թ.:

Հիմնաբառեր՝ *այլախոհություն, ԽՍՀՄ, անկախության, «Ազգային Միացյալ կուսակցություն», ազգային հիմնախնդիրներ, մոսկովյան գերիշխանություն, ազատագրական շարժում, Հայաստանի ազատագրության ծրագիր*:

ՄՈՒՏՔ

Սույն հոդվածը շարադրել եմ հպարտության և երախտագիտության մեծ զգացմամբ: Ցանկանում եմ իմ փոքրիկ ներդրումն ունենալ անկախության շարժման, դրա մասնակիցների հերոսական պայքարի ուսումնասիրման և ներկայացման համար: Որպես անկախության սերնդի ներկայացուցիչ՝ իմ շնորհակալությունն եմ հայտնում այն մարդկանց, որոնք իրենց կյանքի և ազատության գնով պայքարել են Հայաստանի անկախության վերականգնման համար:

1960-80-ական թվականներին այլախոհական շարժումներ էին ընթանում Խորհրդային Միության կազմում գտնվող տարբեր հանրապետություններում. բացառություն չէր նաև Խորհրդային Հայաստանը (Алексеева 7-88): Թեև «այլախոհություն» տերմինը բնորոշում է 1960-ական թվականներին ամբողջ ԽՍՀՄ-ում սկիզբ առած ազատամտության, նոր գաղափարների տարածման և այլակարծության դրսևորումները, այնուամենայնիվ յուրաքանչյուր հանրապետության հայրենասիրական և ազատամիտ շրջանակների համար կային այլախոհության դրսևորումների համար գաղափարական առանձնահատկություններ և նախադրյալներ, որոնց առանցքի շուրջ էլ ձևավորվում էր այլախոհական միտքը, գաղափարախոսությունը, ծավալվում այլախոհական գործունեություն:

Խորհրդային Հայաստանում հայրենասիրական շրջանակներում այլախոհական մտքի ձևավորման վրա կարևոր հետք են թողել Հայոց ցեղասպանությունը, հայկական պատմական տարածքների կորուստը և Հայաստանի անկախության անկումը (Հարությունյան Շ., Այլախոհական շարժման առաջացման նախադրյալները Խորհրդային Հայաստանում 1950-60-ական թթ. 43-53): Սրանք հիմնական նախադրյալներն էին, որոնց շուրջ, մեծավ մասամբ, ամբողջացվեցին այլախոհական դրսևորումների գաղափարական ուղղությունները:

Ուսումնասիրելով հայկական այլախոհությունը և նրա դրսևորումները՝ կարող ենք նկատել, որ Խորհրդային Հայաստանում այլախոհությունը հիմնականում ուներ գաղափարախոսական երեք ուղղվածություն, որոնց առանցքի շուրջ էր ընթանում այլախոհական գործունեությունը: ***Ազգային հարցերի*** մասին բարձրաձայնումը, ինչպիսիք էին Հայոց ցեղասպանության մասին հիշատակումը, հայկական կորսված տարածքների՝ Ղարաբաղի և Նախիջևանի՝ մայր հայրենիքին վերամիավորման պահանջատիրությունը և հայոց լեզվի պաշտպանությունը, ***Հայաստանի անկախության վերականգնումը*** և ***մարդու իրավունքների պաշտպանությունը:*** Դրանք դարձան հայկական այլախոհական շարժումների հիմնական գաղափարական ուղղությունները և շարժառիթները: Սակայն Խորհրդային Հայաստանում ամենաընդգծված և կազմակերպված այլախոհության դրսևորումը Հայաստանի անկախության վերականգնման համար ընթացող պայքարն էր, որն առանց դադարների շարունակվեց այլախոհության առաջին շրջանից՝ հասնելով մինչև ԽՍՀՄ փլուզումը:

Հայաստանի անկախության վերականգնման շարժման համատեքստում անհրաժեշտ է ընդգծել «Ազգային Միացյալ կուսակցութուն» այլախոհական կազմակերպության դերն ու նշանակությունը, որն ամբողջովին սահմանեց Հայաստանի անկախության պայքարի սկզբունքներն ու նպատակները: Այս կազմակերպության ստեղծումով՝ Խորհրդային Հայաստանում անկախության համար մղվող պայքարը դարձավ ավելի նպատակային, սկզբունքային և ուժգին: «Ազգային Միացյալ կուսակցությունը» գաղափարական խոր ազդեցություն էր թողնում թե՛ Խորհրդային Հայաստանում, թե՛ Խորհրդային այլ հանրապետություններում այլախոհական դրսևորումների համար:

«Ազգային Միացյալ կուսակցություն» այլախոհական կազմակերպության պատմության ուսումնասիրումը հնարավորություն կստեղծի առավել մանրամասն և խորությամբ վերհանելու Հայաստանի անկախության վերականգնման դժվարին պայքարը Խորհրդային Միության դեմ:

Սույն հոդվածում մեր առջև խնդիր ենք դրել քննարկել «Ազգային Միացյալ կուսակցություն» այլախոհական կազմակերպության հիմնադրումը, կառույցի տեսակը, բովանդակությունը, գաղափարախոսությունը, ծրագիրը և ծավալած գործունեությունը:

«Ազգային Միացյալ կուսակցության» հիմնադրումը. կազմակերպության տեսակն ու բովանդակությունը

1966 թ. ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 51-րդ տարելիցի առթիվ միջոցառումներ են տեղի ունենում Կոմիտասի այգում: Հայ հայրենասիրական շրջանակները կազմակերպել էին ցույց ցեղասպանության մասին բարձրաձայնման պահանջով: Խորհրդային իշխանությունները ոստիկանական ուժերով ցրում են հավաքվածներին, շուրջ երեք տասնյակ մարդկանց ձերբակալում և տեղափոխում Երևանի N1 բանտ: Ցուցարարները ենթարկվում են 15-օրյա կալանքի (Ավետիսյան 5-20): Բանտախցում միմյանց հետ են ծանոթանում **Հայկազ Խաչատրյանը**, **Շահեն Հարությունյանը** և **Ստեփան Զատիկյանը**: Այնուհետև քննարկումներ են իրականացնում ազգային հարցերի շուրջ և պայմանավորվում ազատ արձակվելուց հետո կրկին հանդիպել և քննարկել պայքարի հետագա ընթացքն ու գաղափարները (ՀԱԱ ֆ. 1191, ց. 20, գ. 5, թթ. 10-15):

Նախապես պայմանավորվածության համաձայն՝ բանտից ազատվելուց հետո Խաչատրյանը, Հարությունյանը և Զատիկյանը հանդիպում են, որի ընթացքում քննարկում են Երևանում գոյություն ունեցող ընդհատակյա կազմակերպությունները, գաղափարական ուղղվածությունները, պայքարի մեթոդները և այն մոտեցումները, որոնք ավելի իրական և արդյունավետ էին: Քննարկումների արդյունքում որոշվում է կազմակերպել Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարի կառույց: Շահեն Հարությունյանն առաջարկում է ստեղծել կուսակցություն, այլ ոչ թե կազմակերպություն՝ նշելով, որ մինչ այդ կազմակերպություններ արդեն կային, և պետք էր ավելի կազմակերպված բնույթ հաղորդել այլախոհական շարժումներին և առանձնապես՝ անկախության համար պայքարին: Հայկազ Խաչատրյանի առաջարկով՝ այլախոհական այս կազմակերպությունը կոչվում է **«Ազգային Միացյալ կուսակցություն»,** որը հիմնվում է 1966 թ. հոկտեմբերին (Շահեն Հարությունյան Անտիպ հուշագրություն 6):

Այլախոհական առաջին կազմակերպություններն առաջացել էին 1960-ականների սկզբից, սակայն բոլոր այդ կազմակերպությունների մեջ առաջնային նշանակություն էր հատկացված ազգային հարցերի բարձրաձայնմանը: Հայկական հայրենասիրական միջավայրում առկա էին անկախությանը միտված հասարակական տրամադրություններ, սակայն մինչև «Ազգային Միացյալ կուսակցության» (այսուհետ՝ ԱՄԿ) հիմնադրումը այդ դրսևորումները կազմակերպված բնույթ չունեին և սահմանափակվում էին բացառապես ելույթներով, քննարկումներով: ԱՄԿ-ի հիմնադրումով՝ փոխվեցին անկախության պայքարի մոտեցումները՝ դառնալով կազմակերպված, նպատակային և ավելի վտանգավոր Խորհրդային իշխանությունների համար:

ԱՄԿ-ն իր բովանդակությամբ և տեսակով այլախոհական կազմակերպություն էր, որը հիմնադրվել էր ընդհատակյա պայմաններում: Ի տարբերություն այլ կազմակերպությունների՝ այս կազմակերպությունն ուներ մի շարք առանձնահատկություններ և բացառիկություն: Սկզբնապես անհրաժեշտ է նշել, որ Խորհրդային Միությունը միակուսակցական համակարգ ուներ, որտեղ, բացի

Կոմունիստական կուսակցությունից, այլ կուսակցություններ չէին կարող լինել, ուստի՝ ԱՄԿ-ն չէր կարող ունենալ պետական և պաշտոնական կարգավիճակ, սակայն այն հիմնադրման պահից ի վեր կոչվել է կուսակցություն, այլ ոչ թե կազմակերպություն: Ներկայումս պատմագիտական տեսանկյունից «Ազգային Միացյալ կուսակցությունը» կոչում ենք այլախոհական կազմակերպություն, այդուհանդերձ, պետք է նշել, որ կազմակերպության հիմնադիրները ցանկացել են ստեղծել այնպիսի կառույց, որն իր կարգավիճակով և բովանդակությամբ ձեռնոց կնետեր Խորհրդային ամբողջ պետությանը և միակուսակցական համակարգին: Ինչպես նշում է հայտնի ռուս այլախոհ Լյուդմիլա Ալեքսեևան, Հայաստանը միակ երկիրն էր ամբողջ ԽՍՀՄ միակուսակցական համակարգում, որտեղ հիմնադրվել և գործում էր հակախորհրդային, անկախական կուսակցություն՝ ԱՄԿ-ն (Алексеева 85):

ԱՄԿ-ն տարբերվում էր ԽՍՀՄ-ում գործող մնացած բոլոր կազմակերպություններից ոչ միայն հռչակված իր անունով և բնույթով, այլ նաև բովանդակությամբ և կառուցվածքով: Այս կուսակցություն-կազմակերպությունն ուներ արդի աշխարհի պատկերացումներին լիովին համապատասխան հատկանիշները: «Ազգային Միացյալ կուսակցությունը» հիմնադրման պահից հռչակված էր որպես կուսակցություն, որն ուներ ծրագիր, կանոնադրություն, նոր մարդկանց անդամագրման կարգ, հարցաթերթիկ, երդման տեքստ, թերթ, դրոշ, կնիք, անդամավճարի կարգ: Այս ամենը համադրելով ներկայումս գոյություն ունեցող կուսակցությունների կառուցվածքների հետ՝ միանշանակ կարող ենք փաստել, որ ԱՄԿ-ն իր տեսակով և բովանդակությամբ ամբողջովին համապատասխանում է կուսակցություն բառին և իմաստին:

ԱՄԿ-ի ծրագիրը կազմել է Հայկազ Խաչատրյանը, սակայն վերջնական տեքստը ուղղվել և մշակվել է Շահեն Հարությունյանի և Ստեփան Զատիկյանի անմիջական մասնակցությամբ: Շ. Հարությունյանն անձամբ կազմել է կուսակցության կանոնադրությունը և անդամի հարցաթերթիկը, իսկ Ս. Զատիկյանը՝ կուսակցության անդամի երդման տեքստը:

ԱՄԿ-ն բացառիկ էր նաև իր ***միջազգային հեղինակությամբ և դիրքով***: Այս կազմակերպությունը մարմնավորում էր Խորհրդային պետության դեմ մղվող տարբեր ժողովուրդների ազատագրական-անկախական պայքարը: 1976 թ. ուկրաինացի բանտարկյալ Վասիլ Ստուսը, ով հետմահու ճանաչվել է Ուկրաինայի ազգային հերոս, նախաձեռնում է գործընթաց, որի արդյունքում ԽՍՀՄ գրեթե բոլոր ռուս, ուկրաինացի, հրեա, լատիշ, լիտվացի, մոլդովացի և այլ ազգերի անկոտրում քաղկալանավորներն իրենց հայտարարում են ԱՄԿ համակիր անդամ (Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ. 142):

ԱՄԿ-ն յուրօրինակ էր նաև կառուցվածքային մոտեցումներում: Կուսակցության ամրապնդումը և անկախության համար մղվող պայքարում նոր մարդկանց ներգրավումը կարևորելով՝ 1967 թ. որոշվում է **Պարույր Հայրիկյանի** գլխավորությամբ ստեղծել ԱՄԿ-ին կից գործող երիտասարդական կառույց, որի հիմնական նպատակը պետք է լիներ ապագա ԱՄԿ-ականների պատրաստումը: ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանի առաջարկով խումբը կոչվում է **«Շանթ»** (Հայրիկեան 8):

ԱՄԿ հիմնադրումից 12 տարի անց՝ 1978 թ., Շահեն Հարությունյանի եղբայրը՝ ԱՄԿ անդամ **Մարզպետ Հարությունյանը**, հիմնում է Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարի կազմակերպություն՝ **«Հայ երիտասարդների միությունը»**, որն ԱՄԿ երիտասարդական մասնաճյուղն էր (Հարությունյան Վ., Քաղբանտարկյալի պատմություն 15):

ԱՄԿ-ին զուգահեռ ստեղծված վերոնշյալ երկու կազմակերպությունների հիմնադրումը և գործունեությունը վկայում են այն մասին, որ Հայաստանի անկախության համար մղված պայքարը ունեցել է ինստիտուցիոնալ բնույթ: Մյուս կողմից՝ երևում է այն ազդեցությունը, որն ունեցել է «Ազգային Միացյալ

կուսակցությունը» Խորհրդային Հայաստանում ընթացող այլախոհական-անկախական շարժումների վրա:

ԱՄԿ-ի մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ այս կազմակերպությունը հիմնադրվել է ընդհատակյա պայմաններում, սակայն ժամանակի ընթացքում հանդես է եկել բացահայտ դիրքերից: ԱՄԿ-ականներն անթաքույց պայքարել են Հայաստանի անկախության վերականգնման համար: Հատկանշական է, որ անգամ կալանավորումներից հետո և դատավարությունների ընթացքում, գրեթե բոլոր ԱՄԿ-ականները շարունակել են պահպանել իրենց պայքարի ոգին ու տրամադրվածությունը: Այս ամենն ավելի ակներև է դառնում ԱՄԿ անդամներ՝ **Ազատ Արշակյանի**, **Ռազմիկ Զոհրաբյանի** և **Ռազմիկ Մարկոսյանի** 1974 թ. տեղի ունեցած դատավարությունից, որի ընթացքում Արշակյանը, Զոհրաբյանը և Մարկոսյանը, իրենց վերջին խոսքի ժամանակ հայտարարել են, որ իրենք «Ազգային Միացյալ կուսակցության» զինվորներն են, չեն հրաժարվում իրենց գաղափարներից և կշարունակեն պայքարել Հայաստանի ազատության և անկախության համար:

Ուսումնասիրելով ԱՄԿ-ի պատմությունը և համեմատական վերլուծություն իրականացնելով այլախոհական այլ կազմակերպությունների հետ՝ տեսնում ենք, որ ԱՄԿ-ն միակ կազմակերպությունն էր, որը իր գործունեությունը սկսեց 1960-ական թվականներից շարունակեց մինչև ԽՍՀՄ փլուզումը: Խորհրդային բռնապետական իշխանությունները, որքան էլ փորձում էին կասեցնել Հայաստանի անկախության պայքարը, կազմաքանդել անկախության ջահակիր և առաջամարտիկ դարձած ԱՄԿ-ն, միևնույնն է, «Ազգային Միացյալ կուսակցությունը», չնայած խիստ և դաժան հալածանքներին, բանտարկություններին, աքսորներին և մահապատիժներին, այնուամենայնիվ, շարունակեց իր անկոտրում պայքարը մինչև ԽՍՀՄ փլուզումը (Հայկազ Խաչատրյան անտիպ հուշագրություն, Սև գիրք):

«Ազգային Միացյալ կուսակցությունը»՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված առաջին կուսակցություն. Հայաստանի ազատագրության և անկախ պետականության վերականգնման ԱՄԿ-ի ծրագիրը

Հայոց պատմության տարբեր ժամանակափուլերում հայ ժողովուրդը դիմել է ազգային-ազատագրական պայքարի՝ նպատակ ունենալով պայքարել հայ ժողովրդի ազատագրության և հայկական անկախ պետականության վերականգնման համար: Այդ պայքարը նկատելի է բոլոր այն դարաշրջաններում, երբ Հայաստանը կորցրել էր իր անկախությունը: Հայաստանի անկախության և պետականության վերականգնման համար պայքարը եկել է դարերի խորքից՝ հասնելով մինչև 20-րդ դար՝ Խորհրդային Միության դեմ անկախության շարժում և անկախ հանրապետության հիմնում: 17-րդ դարից սկսած՝ Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարը ստացավ նոր՝ ավելի կառուցվածքային նպատակադրում: 17-րդ դարի վերջից հայ հայրենասիրական շրջանակներում ավելի շիկացան Հայաստանի ազատագրության և անկախության վերականգնման համար տրամադրությունները, որոնք տարածված էին թե՛ բուն հայկական տարածքներում, թե՛ գաղթօջախներում: Այս ժամանակաշրջանում ստեղծվեցին Հայաստանի ազատագրության մի շարք ծրագրեր:

1699 թ. Իսրայել Օրու կողմից կազմվեց 36 կետից բաղկացած «Պֆալցյան» ծրագիրը, որը նպատակ ուներ Եվրոպական որոշ դաշնակից պետությունների օգնությամբ ազատագրել Արևելյան Հայաստանի տարածքը պարսկական տիրապետությունից և հիմնել հայկական անկախ թագավորություն (Հովհաննիսյան 29-34): Թեև սկզբնապես բանակցություններն ընթանում էին արդյունավետ, սակայն քաղաքական նպատակահարմարությունների արդյունքում պարզ դարձավ, որ «Պֆալցյան» ծրագրի իրականացումն իրատեսական չէ:

Եվրոպայից անցնելով Ռուսաստան և հրաժարվելով նախկինում կազմված ծրագրից՝ Իսրայել Օրին կազմում է Հայաստանի ազատագրության «Մոսկովյան» ծրագիրը, որում Հայաստանի ազատագրությունը և անկախ պետականության հիմնումը կապում է Ռուսաստանի աջակցության հետ: Սակայն ռուսական շահերի այլ առաջնահերթությունների պատճառով ձգձգված գործընթացի ընթացքում անսպասելիորեն մահանում է Իսրայել Օրին (Հովհաննիսյան 34-41):

Հայաստանի պետականության վերականգնման համար իրականացված պայքարի անհաջող փորձերը բացասական հետևանքներն են թողնում բուն հայկական տարածքներում ապրող հայության վրա: 18-րդ դարի առաջին քառորդում ազատագրության ալիք էր տարածվել Արցախում և Սյունիքում: Շուրջ մեկ տասնամյակ տևած շարժումը նույնպես պսակվում է անհաջողությամբ: Գրավված Հայաստանում չկար ներուժ և գաղափարական միջավայր՝ Հայաստանի ազատագրությունը կազմակերպելու համար: Սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ 18-րդ դարի երկրորդ կեսից հայ ազատագրական շարժման գաղափարներ տարածվեցին տարբեր երկրների հայկական գաղթօջախներում:

18-րդ դարի կեսերից հնդկական գաղթօջախում ազատագրական գործունեություն սկսեց ծավալել Հովսեփ Էմինը: Լինելով թուրք-պարսկական տիրապետության տակ գտնվող Հայաստանում, ծանոթանալով հասարակական տրամադրություններին՝ Հովսեփ Էմինը Հայաստանի ազատագրության ծրագիրը կապում է Ռուսաստանի հետ: Թեև Էմինը տասը տարի փորձում էր կյանքի կոչել իր ծրագիրը, այդուհանդերձ այն նույնպես մնում է չիրագործված (Հովհաննիսյան 76-89):

1771 թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում Շահամիր Շահամիրյանի ջանքերով ստեղծվում է «Մադրասի» քաղաքական խմբակը, որի հիմնական նպատակն է լինում կազմակերպել Հայաստանի ազատագրությունը, որի ծրագիրը գրավոր, հանրայնորեն ներկայացվում է «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» երկասիրության մեջ: Այստեղ ներկայացված են Հայաստանի ազատագրության կարևորությունը, ինչպես նաև ոգեշնչում և կոչ էր անում հայ ժողովրդին պատրաստվելու ազատագրական շարժմանը և չվախենալու մահից: Խմբակի մյուս կարևոր աշխատանքն է լինում «Որոգայթ փառաց» երկասիրության տպագրումը, որտեղ ներառված էին Հայաստանի պատմական-տնտեսական բաժինը և Հայաստանի ապագա սահմանադրության նախագիծը (Հովհաննիսյան 89-101):

18-րդ դարի 60-70-ական թվականներին ազատագրական գաղափարները տարածվեցին ռուսաստանյան գաղթօջախներում: 1769 թ.Մովսես Սարաֆյանը կազմել է Հայաստանի ազատագրության 14 հոդվածից կազմված ծրագիր, այնուհետև 1783 թ. Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը կազմել է նույն նպատակը հետապնդող «Հյուսիսային» ծրագիրը (Հովհաննիսյան 101-110): Վերոնշյալ ծրագրերը նույնպես չպսակվեցին հաջողությամբ:

19-րդ դարի վերջից Հայաստանի ազատագրության խնդրով մտահոգված շրջանակները ձևավորում են հայ ժողովրդի պատմության առաջին կուսակցությունները, որոնք ստեղծվեցին ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքներից դուրս: 1885 թ. աշնանը Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում հիմնադրվեց Արմենական կուսակցությունը, որի ծրագիրը կազմված էր 7 մասից: Արմենական կուսակցության հիմնական նպատակն էր «Հեղափոխությամբ հայ ժողովրդի համար ձեռք բերել իրեն ազատ կառավարելու իրավունք, որով միայն նա կկարողանա մարդավայել ապրելու միջոցներ ունենալ և դրանք գործադրել ժամանակի պահանջների համեմատ» (Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ.371): 1887 թ. Շվեյցարիայի Ժնև քաղաքում հիմնադրվեց Հնչակյան կուսակցությունը, որն իր առջև հիմնարար նպատակ էր դրել Թուրքահայաստանի, Ռուսահայաստանի և Պարսկահայաստանի տարածքում հիմնել անկախ հայկական պետություն (Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ. 378-379): 1890 թ. Ռուսաստանի կայսրության կազմում գտնվող Թիֆլիս քաղաքում հիմնադրվեց Հայ

Հեղափոխականների Դաշնակցություն կուսակցությունը, որն իր հիմնական խնդիրն էր համարում՝ «ապստամբության միջոցով Տաճկահայաստանում հասնել տնտեսական և քաղաքական ազատության»: Առավել մանրամասնելով «ազատություն» բառը՝ կուսակցությունը նրբորեն խուսափում էր անկախության հասնելու հիմնախնդրից (Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ. 389-390):

Այս կուսակցություններն իրենց վրա են վերցրել շարունակելու հայ ժողովրդի ազատագրական շարժման ծրագրերի կազմումն ու կենսագործումը, որոնք սկսվել էին դեռևս 17-րդ դարի վերջից: Կուսակցություն կոչվող քաղաքական կենտրոնացված մարմնի միջոցով առավել կանոնակարգված և հստակ էին դառնում Հայաստանի անկախության վերականգնման և հայ ժողովրդի ազատության համար ընթացող պայքարը:

17-19-րդ դարերի ընթացքում ձևավորված Հայաստանի ազատագրության ծրագրերի և այդ գործունեությունն իրականացնելու համար կազմավորված կուսակցությունների հիմնական նպատակը, որոշ ծրագրային տարբերություններով, եղել է Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարը:

Ուսումնասիրելով հայ ժողովրդի ազատագրական դրսևորումների պատմությունը 17-20-րդ դարերի ընթացքում, քննարկելով նրանց ծրագրերի հիմնական դրույթները, նպատակները՝ կարող ենք փաստել, որ թե՛ առաջ քաշված ծրագրերը, թե՛ հիմնադրված կուսակցությունները, կառուցվածքային և ծրագրային ամբողջացրել են հայ ժողովրդի ազատագրական մղումները մինչև 20-րդ դարի սկիզբ: Այս համատեքստում պետք է դիտարկել 20-րդ դարի կեսերին Խորհրդային Միության կազմում գտնվող Խորհրդային Հայաստանում հիմնադրված Ազգային Միացյալ կուսակցությունը:

Հայ պատմագիտության և հասարակական-քաղաքական միտքը մեծապես կարևորել է 17-20-րդ դարասկզբի ընթացքում հայ ազատագրական ինստիտուցիոնալ պայքարը, բայց գուցե չգիտակցված կամ նպատակադրված մոռացության և անկարևորության մատնելով Խորհրդային Հայաստանում ձևավորված անկախության շարժումը, որը, ըստ էության, իր հիմնական նպատակներով ոչնչով չէր տարբերվում մյուս ազատագրական շարժումներից: 17-20-րդ դարասկզբին Հայաստանի ազատագրության պայքարը հիմնականում ուղղված էր պարսկական կամ թուրքական տիրապետության դեմ: Իսկ 20-րդ դարի երկրորդ կեսից սկիզբ առած ազատագրական շարժումը ուղղված էր Խորհրդային-ռուսական կայսրության դեմ կրկին նույն նպատակով՝ Հայաստանի անկախության վերականգնման առաջնահերթությամբ:

Այս համատեքստում կարևոր է նշել նաև, որ Ազգային Միացյալ կուսակցությունը, լինելով հայ ժողովրդի ազատագրության և Հայաստանի պետականության վերականգնման համար պայքարող կառույց, ***Հայաստանի Հանրապետության տարածքում՝ մայրաքաղաք Երևանում հիմնադրված առաջին կուսակցությունն էր:*** Ի տարբերություն Հնչակյան և Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունների, որոնք հիմնադրվել էին համապատասխանաբար՝ Շվեցարիայի Ժնև և Ցարական Ռուսաստանի Թիֆլիս քաղաքներում, Արմենական կուսակցությունը և Ազգային Միացյալ կուսակցությունը հիմնադրվել էին համապատասխանաբար՝ Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում և Խորհրդային Միության տիրապետության ներքո գտնվող Արևելյան Հայաստանի Երևան քաղաքում: Քաղաքական և պատմական դժբախտ դասավորումների արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության ներկայիս սահմաններում չի գտնվում Արևմտյան Հայաստանի Վան քաղաքը: Միևնույն ժամանակ, չթերագնահատելով հայ ազգային առաջին երեք կուսակցությունների գործունեությունը, պետք է նշել, որ ԱՄԿ-ն ստեղծվեց Խորհրդային գաղութացման ներքո գտնվող Հայաստանում, պայքար մղեց Հայաստանի անկախության վերականգնման համար, որը պսակվեց հաղթանակով՝

Հայաստանի անկախության հռչակումով և Հայաստանի Հանրապետության վերածնունդով:

Հոդվածի սույն հատվածում կքննարկենք և կներկայացնենք Ազգային Միացյալ կուսակցության ***գաղափարախոսությունը, ծրագրի հիմնական դրույթները***, որը հնարավորություն կտա լավագույնս հասկանալու ԱՄԿ-ի բովանդակությունը և նրա դերն ու նշանակությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարի համատեքստում:

Հայկազ Խաչատրյանը, Շահեն Հարությունյանը և Ստեփան Ջատիկյանը, հիմնադրելով Ազգային Միացյալ կուսակցությունը, հաստատեցին նաև կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը և երդման տեքստը, որոնց ուսումնասիրությունը, ամբողջապես ի ցույց է դնում ԱՄԿ-ի գաղափարախոսական և քաղաքական առաջնահերթությունները և նպատակները (Հարությունյան Վ., Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում 78-83):

Կուսակցության ծրագրի սկզբնամասում ներկայացված է, թե ինչպիսի կառույց է այն: Ըստ այդմ՝ ***«ԱՄԿ-ն քաղաքական, դեմոկրատական, հասարակական կազմակերպություն է, որի անդամը պետք է լինի ամբողջ հայության գիտակից տարրը: Հայ ժողովրդի միասնականությունը, ազգային հոգեբանության և բնորոշ կողմերի անխախտ պահպանումը, փոխադարձ սիրո առկայությունը ներկայումս հանդիսանում է ամբողջ աշխարհի հայ տարրի հիմնական բնույթը, որի շնորհիվ այդ տառապած, հայրենիքից քշված ժողովուրդը կկարողանա հասնել իր բարի նպատակներին, իղձերի իրականացմանը՝ կկարողանա վերականգնել կորցրած պետականությունը, կվերադարձնի հափշտակված, սրբապղծված Հայրենի հողը: Եվ ամենից կարևոր է, Հայը ապրելու է իր սեփական տան մեջ, իր սուրբ հողի վրա, նորից կստեղծի այն աշխարհահռչակ դրախտը, որը հիշատակվում է Սուրբ Գրքում, քանզի նա ունի բոլոր այն առավելությունները, որով օժտված է մարդը լայն իմաստով»***:

Ներածական մասին հաջորդում են բուն ծրագրի դրույթները, որոնք, ըստ էության, ամբողջացնում են բոլոր այն նպատակները, որոնք դրված էին ԱՄԿ-ի առջև: Ծրագրային մասում առաջ քաշված նպատակները, ընդհանուր առմամբ կարող ենք բնութագրել որպես հեռավոր և մոտակա նպատակներ: ԱՄԿ-ն առաջ էր քաշում անկախ Հայաստանի ստեղծման ծրագիրը, որտեղ մանրակրկիտ ներկայացվում է ապագա Հայաստանի անկախ Հանրապետության տեսակը, կարգավիճակը, միջազգային գործընկերների և այլ պետությունների հետ հարաբերությունների հիմնակետերը և արժեքները: Ներկայացված է գաղութարար պետության՝ Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքարի առաջնայնությունները:

Ծրագրի առաջին դրույթում ներկայացված է ԱՄԿ-ի կողմից ընդունելի սկզբունքները և մերժված գաղափարները, որոնք պետք է պահպանվեին իրենց կողմից կազմակերպվող ազգային-ազատագրական պայքարի ընթացքում: Ըստ այդմ՝ ***«ԱՄԿ-ն իր հասարակական, քաղաքական, գաղափարական գործունեության ընթացքում զավթողական ոչ մի նպատակ չպետք է ունենա, կուսակցության ազգային-ազատագրական պայքարի գաղափարներին խորթ են միլիտարիզմը, թթու ազգայնականությունը, գերիշխանության ձգտումը (դիկտատուրա), ռասայական խտրականությունը և միջազգային օրենքների կոպիտ խախտումը»*** (Հարությունյան Վ., Այլախոհությունը ... 79-80)***:***

Ծրագրի երկրորդ և երրորդ կետերում ամփոփված են թե՛ դրացի ազգերի և թե՛ աշխարհում ապրող այլ ազգերի հետ փոխրահարբերությունների, նրանց հետ վիճելի հարցերի կարգավորումների սկզբունքների մասին ԱՄԿ պատկերացումները: Ըստ այդ սկզբունքների՝ ***«Դրացի բոլոր ազգերի հետ ԱՄԿ-ն պետք է ձգտի բարի և անկեղծ եղբայրական հարաբերությունների մեջ լինել: Վիճելի բոլոր հարցերը ԱՄԿ-ն պարտավոր է լուծել խաղաղ, փոխադարձ զիջումների և հարգանքի միջոցով, առանց թույլ տալու մեկ ուրիշի միջամտությունը, հարգելով դրացի ազգերի սուվերենությունը և արժանապատվությունը»:*** Այնուհետև երրորդ

կետում սահմանված է. ***«Բոլոր այն ազգերը, որոնք կցանկանան ազնիվ, եղբայրական փոխհարաբերությունների մեջ մտնել Հայ ժողովրդի հետ, օգնության ձեռք կմեկնեն կամ օգնության կարիք կզգան առանց շահամոլության, ԱՄԿ սրբազան պարտքն է սրտաբաց դիմավորելու և ողջունելու նման մարդասիրական քայլը»***: Ծրագրի սկզբնամասում ներկայացված դրույթները ցույց են տալիս, թե ինչպիսին էին պատկերացնում Հայաստանի անկախ հանրապետությունը միջազգային հարաբերությունների առանցքում որպես միջազգային հարաբերությունների անկախ սուբյեկտ: Եվ այս կետերին տրամաբանորեն հաջորդում է այն սկզբունքը, որը պետք է միտված լիներ կանխելու բոլոր այն ազգերի գործունեությունը, որոնք կսպառնային հայ ժողովրդի ազատությանն ու Հայաստանի անկախությանը: Այս մասին ամփոփված է ծրագրի չորրորդ կետում, որտեղ գրված է. ***«Այն ազգը, որը վստահ լինելով իր ազգային բազմաքանակության և զենքի հզորության վրա, կձգտի զարտուղի ստոր ճանապարհներով, թաքնված բարեկամի դիմակի տակ, իր գերիշխանությունը տարածել, երկիրը կողոպտել և ստրկացնել, ԱՄԿ-ն պարտավոր է նախ դիվանագիտական միջոցներով, իմաստուն, խոհեմ, օգտագործելով մտքի ուժը, հիմնվելով միջազգային օրենքների վրա, անվեհեր խիզախությամբ և հաստատակամությամբ հեռացնել վտանգն իր հայրենիքից, աշխատելով վերջ դնել օրհասական պատերազմի վտանգին: Եթե դիվանագիտական միջոցները չօգնեն խաղաղության գործին, բարիդրացիական հարաբերությունների վերականգնմանը, և թշնամին ավազակային ոտնձգություն կանի՝ հաշվի չառնելով ուրիշ ազգերի արժանապատվությունը, ԱՄԿ-ն ոտքի պետք է հանի ամբողջ ժողովրդին թշնամու դեմ: Միասնական ուժի, խիզախորեն պայքարի նվիրվածության, Հայրենիքի ջերմ սիրո, նրա ազատության և խաղաղության համար մարտնչող ուժի դեմ բոլոր իմպերիալիստներն անզոր կլինեն»*** (Հարությունյան Վ., Այլախոհությունը ... 80):

ԱՄԿ ծրագրի 5-8-րդ դրույթներում են սահմանված այն հիմնական նպատակները, որոնք կուսակցության հիմքում էին դրված: Թեև ծրագրի բոլոր 15 դրույթներն էլ ներկայացնում են կուսակցության նպատակները, գաղափարները և պայքարի ճանապարհները, այնուամենայնիվ, այս հատվածում սահմանված են գլխավոր նպատակները, որոնց համար պետք է պայքարեր ԱՄԿ-ն: Հինգերորդ կետում սահմանված է, որ ***«Քանի դեռ գոյություն չունի Ազատ և Անկախ Հայաստան, նշանակում է՝ բացակայում է ամենակարևոր բանը լիարժեք ազգ կամ պետություն կոչվելու համար: Հայրենասեր մարտնչող ուժի վրա ծանրանում է այդ առաջնային ու դժվարին խնդիրը»:***

Ծրագրի վեցերորդ կետը, որը գրված էր հստակ ընդգծումով և մեծատառերով սահմանում էր ամենագլխավոր խնդիրը, որն իր առջև դրել էր ԱՄԿ-ն: Ըստ էության, վեցերորդ կետից առաջ և հետո գրված բոլոր սկզբունքների առանցքը ամբողջացված էր վեցերորդ կետում: Ըստ հատուկ ընդգծված կետի՝ ***«ԱՄԿ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Է ԱՋԱՏԱԳՐԵԼ ԱՋԳԸ ՕՏԱՐԻ ԼԾԻՑ, ԴՈՒՐՍ ԳԱԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԱՋԱՏ, ԱՆԿԱԽ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵՋՈՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»***: Յոթերորդ կետում սահմանված էին ԱՄԿ-ի հեռանկարային ծրագրերը, ըստ որոնց՝ ***«ԱՄԿ-ն պետք է պայքարի Միացյալ Հայկական Պետություն ստեղծելու համար, իսկ հետագայում նաև Կիլիկիայի Հայկական հանրապետություն ստեղծելու համար»***:

Անկախության կազմակերպված շարժման հիմնադիրները, ազգային-քաղաքական գլխավոր նպատակները սահմանելուց հետո, ծրագրի ութերորդ կետում ներկայացրել էին անկախ Հայաստանի սոցիալ-հասարակական համակարգի առաջնահերթությունները և արժեքները, որոնց հիման վրա պետք է ձևավորվի հայ ազատ հասարակարգ: Ըստ դրա՝ ***«Հայաստանում կլինի մեկ հասարակարգ՝***

ծնունդ կյանքի օրենքների, ապրելակերպի, ազնիվ աշխատանքի և ջերմ հայրենասիրության: Այդ հասարակարգում չեն լինի հզորն ու տերը: Հայ ազգի մեջ եղած բոլոր հասարակական կողմերը, որոնք արգասիք են ճնշման և բռնությունների, արագ կերպով արմատախիլ կլինեն, երբ ժողովուրդը տերն ու տնօրենը կլինի իր Հայրենիքին և ունեցվածքին»:

Կուսակցության ծրագրի առաջին հատվածում ներառված էին ԱՄԿ-ի գլխավոր նպատակները, առաջնահերթությունները, սկզբունքներն ու արժեքները, ներկայացված էր, թե որն է գլխավոր խնդիրն ու նպատակը, թե ինչպիսի պետություն պետք է լինի ազատագրված անկախ Հայաստանը, ինչպիսի միջազգային դիրք պետք է ունենա, ինչ արժեքների և սկզբունքների վրա պետք է կառուցվեն հարևան և այլ ազգերի հետ փոխհարաբերությունները: Հստակ ներկայացված էր, թե ինչպիսի արժեքներով առաջնորդվող հասարակություն պետք է ձևավորվի անկախ Հայաստանում:

Գլխավոր նպատակները և սկզբունքները սահմանելուց հետո ԱՄԿ ծրագրում ներկայացվում են բոլոր այն առաջնային պայքարի ուղղությունները, որոնց միջոցով հնարավոր կլիներ հասնել հիմնական նպատակին՝ ազատ ու անկախ Հայաստանի ստեղծմանը: Եվ քանի որ Հայաստանի անկախությունը նվաճվել և պետականությունը կործանվել էր Խորհրդային Ռուսաստանի կողմից, ԱՄԿ-ն իր հիմնական պայքարի թիրախ էր սահմանել Խորհրդային Ռուսաստանը, որից պետք էր ազատագրել Հայաստանը:

Կուսակցության ծրագրի իններորդ դրույթում սահմանված էր. ***«ԱՄԿ-ն անողոք պայքար պետք է ծավալի հայ ժողովրդին կողոպտելու դեմ, նրա ողջ հարստությունը Ռուսաստան տեղափոխելու դեմ: Հայ ժողովրդի ստեղծած բարիքները, երկրի ընդերքում գտնվող հարստությունը, երկրի ամբողջ տնտեսությունը մեկ տնօրեն պետք է ունենա՝Հայ ժողովուրդը»***:

ԱՄԿ ծրագրի տասներորդ կետում նշված էր. ***«Անողոք պայքար սկսել մոսկովյան գերիշխանության դեմ, կամայականությունների եւ բռնությունների դեմ, որից հեծում եւ տքնում է ամբողջ ազգը: Ազատագրել ազգը նման անմարդկային, միջազգային օրենքներով անթույլատրելի վիճակից»***:

Հստակ սահմանված էին նաև ԱՄԿ-ի տարածքային պահանջները և նպատակները, որոնք ձևակերպված էին տասնմեկերորդ հոդվածում. ***«Պահանջել Ռուսաստանից՝ խաղաղ ճանապարհով վերադարձնել Հայաստանին այն հողային տարածությունները, որ անօրինական կարգով տրվել են Ադրբեջանին եւ Վրաստանին: Միևնույն ժամանակ ամեն կերպ պետք է խուսափել ռուսական ստոր քաղաքականությունից, որը նա գործադրում է իր ամբողջ գոյության ընթացքում, բոլոր ազգերի նկատմամբ՝ հեռու թե մոտիկ, այսինքն՝ չներգրավվել նրա հրահրած կեղտոտ ազգամիջյան խառնակչություններին եւ չվստահել ոչ մի բանում: Եթե Ռուսաստանը կփորձի արդարացի պահանջների դեմ ուժ գործադրել, այն ժամանակ ԱՄԿ-ի պարտքն է գործադրել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք հարկավոր կլինեն սանձելու բռնությունը, նման դեպքերում ԱՄԿ-ն կլինի անողոք»*** (Հարությունյան Վ., Այլախոհությունը … 80-81):

Կուսակցության հիմնադիրները հստակ ուղերձներ էին ներառել հայ ժողովրդի տարբեր հասարակական շերտերին՝ զինվորականությունից մինչև գիտնականներ: Այս մասին կարդում ենք ծրագրի տասներկուերորդ հոդվածում. ***«ԱՄԿ-ն պետք է պահանջի ներկա կառավարությունից, որպեսզի վերականգնվի ազգային բանակը եւ սպառազինվի ժամանակակից առաջնակարգ զենքով, որի համար Հայաստանը մեծ հնարավորություններ ունի: Ամբողջ հայ զինվորականությունը, սկսած շարքային զինվորից մինչեւ մարշալն ու ծովակալը, պետք է վերադառնան իրենց հայրենիքը՝ Հայաստան: Պետք է վերադարձնել նաեւ բոլոր գիտնականներին, գյուտարարներին ու***

մասնագետներին, որոնք իրենց տաղանդով պարտական են միմիայն Հայ ժողովրդին, բայց իրենց գիտելիքները տալիս են Ռուսաստանին, իսկ հայրենիքի եւ ազգի համար ոչինչ չեն ներկայացնում»:

ԱՄԿ-ն իր ծրագրի տասներեքերորդ դրույթով հաստատել էր, թե ինչպիսի փոփոխությունների պետք է ենթարկի այդ ժամանակ Խորհրդային գաղութացման ենթարկված հայկական պետությունը. ***«ԱՄԿ-ի նպատակն է ներկայիս Հայկական հանրապետությունը, որը կեղծ պետություն է իր խաբեբայական սիստեմով, դարձնել իսկական Արժեք պետություն, որը ոչ միայն չպետք է ենթարկվի օտարի հրամաններին և դուրս գա նրա ստրկատիրական գերիշխանությունից, այլև այդ Անկախ Հայաստանը պետք է ունենա զորք, զենք եւ դրամ (ոսկու պաշար)»***:

Վերոշարադրյալ բոլոր հոդվածների գաղափարական բովանդակությունը և սկզբունքային դիրքորոշումները ցույց են տալիս, որ ԱՄԿ հիմնադիրները մեծ ուշադրությամբ են կազմել կուսակցության ծրագիրը՝ փորձելով բաց չթողնել ոչ մի կարևոր գաղափար, նպատակ կամ սկզբունք: Այս ամենի համատեքստում պետք է դիտարկել ծրագրի տասնչորսերորդ հոդվածը, որտեղ անդրադարձ էր կատարվում Ռուսասատանի հնարավոր բարիդրացիական հարաբերություններին: Ակնհայտ է, որ Խորհրդային կայսրությունը չէր կարող ունենալ դրական վերաբերմունք ԱՄԿ-ի և նրա ծրագրում գերնպատակ դարձած անկախ Հայաստանի գաղափարի հետ և վարելու էր անհաշտ և դաժան պայքար հայ անկախականների դեմ, որի մասին վստահաբար շատ լավ հասկանում էին ԱՄԿ հիմնադիրները: Այնուամենայնիվ, այս դրույթը կարևոր է այն համատեքստում, որ հերթական անգամ է փաստում, որ կուսակցության առաջնային և գլխավոր նպատակը Հայաստանի անկախության վերականգնումն էր, այլ ոչ թե պարզապես որևէ պետության դեմ կռիվը: Տասնչորսերորդ հոդվածն ասում էր. ***«Եթե Ռուսաստանը կցանկանա անշահախնդիր, բարեկամական հարաբերությունների մեջ մտնել Հայկական Հանրապետության հետ, Հայաստանը երբեք չի հրաժարվի անկեղծ բարեկամությունից»***:

ԱՄԿ-ն, իր ծրագրում հանգամանալից անդրադարձներ կատարելով բոլոր կարևոր հիմնախնդիրներին, չէր կարող բաց թողնել հայկական մեծ սփյուռքին վերաբերող հարցերը: Ծրագրի տասնհինգերորդ հոդվածում կարդում ենք. ***«ԱՄԿ-ի սրբազան պարտքն է իր բողոքի ձայնը բարձրացնել Հայկական դատին արդարացի լուծում տալու համար և եռանդուն պայքար ծավալել Արևմտյան Հայաստանի ստեղծման համար, որպեսզի աշխարհի բոլոր կողմերից երեք միլիոնից ավելի թափառական հայեր վերադառնան իրենց հազարամյակների օրրանը, որը շատ կարեւոր դեր կխաղա խաղաղության համար Միջին Արևելքում եւ ամբողջ աշխարհում»*** (Հարությունյան Վ., Այլախոհությունը ... 81):

Կուսակցության ծրագրի հիմնական դրույթներից հետո, վերջնամասում նշված էր ԱՄԿ-ի կողմից սահմանված այն արժեքները, սկզբունքները և պահանջները, որոնք պետք է ունենային ԱՄԿ անդամները: Ըստ այդմ՝ ***«ԱՄԿ-ի այս ազնիվ ձգտումներն իրականացնելու համար, կուսակցության յուրաքանչյուր անդամից պահանջվում է. ա. ջերմ սեր դեպի հայրենիքն ու ազգը, բ. անձնազոհություն, գ. համառություն, տոկունություն և խիզախություն, դ. վստահություն իր ճշմարտացիության, գիտելիքների և հաղթանակի վրա, ե. հավատ դեպի ընկերը և կուսակցությունը: Լինել խորաթափանց և աչալուրջ: Ինչպես Սուրբ Գրքում ամփոփված ասվում է՝ Հույս, Հավատ եւ Սեր»***:

Ազգային Միացյալ կուսակցության ծրագրի վերջնամասում հստակ ձևակերպված էր, որ ***«ԱՄԿ-ի ծրագիրն ընդհանուր համաձայնությունից և հաստատումից հետո ենթակա չէ քննարկման եւ փոփոխությունների այնքան ժամանակ, մինչև իրադրությունների արմատական փոփոխություններ տեղի չունենան: Ծրագիրը միշտ էլ ենթակա է նույն գաղափարական նպատակներին ծառայող խնդիրների ավելացմանը»***:

Սրանք էին բոլոր այն կետերը, որոնք ներառված էին ԱՄԿ-ի ծրագրում: Այս գրավոր սահմանումներն անկախության պայքարի շրջանակներում լրջագույն ներդրում էին, քանի որ Հայաստանի անկախության պայքարի վերականգնումը, դրան հասնելու ճանապարհները և ապագայում ստեղծվելիք անկախ Հայաստանի ներքին և արտաքին գաղափարախոսական հենքերը սահմանված էին այս ծրագրում: Հայաստանի անկախության համար պայքարը, ի դեմս ԱՄԿ ծրագրի, ուներ գաղափարախոսական բոլոր հիմքերը, որոնց վրա հենվելով՝ կարելի էր ստեղծել ու կառուցել ազատ ու անկախ Հայաստան:

ԱՄԿ նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ էին հստակ ներկուսակցական կարգավորումներ, որոնք ԱՄԿ հիմնադիրներն ամբողջացրել էին կուսակցության կանոնադրության մեջ, որի ներածական մասում սահմանված էր, թե ում համար է այս կուսակցությունը, ովքեր կարող են լինել ԱՄԿ անդամ. ***«Այս կազմակերպությունը վերաբերում է միայն հայ ազգին: Շատ հազվագյուտ բացառությամբ՝ կարող են անդամ լինել օտար ազգի միայն այն քաղաքական գործիչները կամ արվեստագետները, հայագետները, որոնք կանգնած են ճնշված ազգերի պաշտպանության դիրքերում: Աշխարհի ամեն մի մասում ապրող հայ ազգի ամեն մի զավակ իրավունք ունի մտնելու «Ազգային միացյալ կուսակցություն» հասարակական-քաղաքական կազմակերպության շարքերը, առանց սեռի, կրթական մակարդակի խտրականության»***:

Այս ամենին զուգահեռ հստակ և բավականաչափ խիստ էին ԱՄԿ անդամի հավակնորդ մարդու նկատմամբ պահանջները, որոնք ըստ հերթականության սահմանված էին կուսակցության կանոնադրության հիմնական մասում: ***Ստորև ներկայացված է կուսակցության կանոնադրությունը***, որտեղ հստակ նշվում է, թե ովքեր կարող են լինել ԱՄԿ անդամ, ինչպիսի պարտավորություններ ունեն կառույցի անդամները, և թե ինչպես է կարգավորվելու կուսակցության կառավարումը. «1) ԱՄԿ-ի անդամ կարող են լինել 18 տարեկանից ոչ պակաս անձինք, որոնք կընդունեն ԱՄԿ-ի ծրագիրը, կանոնադրությունը և Ազգային Սրբազան Երդումը: 2) ԱՄԿ-ի անդամը պարտավոր է սրբությամբ կատարել կուսակցության ծրագիրը, նրա իրագործումը կյանքում՝ ի նպաստ Ազգի եւ Հայրենիքի պահանջների: 3) ԱՄԿ-ի անդամը պարտադիր կերպով պետք է զբաղվի ինքնազարգացմամբ եւ աչալուրջ կերպով հետևի միջազգային իրադարձություններին.ա. պետք է ուսումնասիրի փիլիսոփայություն, պատմություն, հատկապես Հայոց պատմություն 19-20-րդ դարերի, կրոն (բոլոր դավանանքների), մոտ անցյալի եւ ժամանակակից միջազգային քաղաքականություն, հատկապես այն ազգերի, որոնք անմիջական առնչություն ունեն Հայ ազգի, նրա ճակատագրի հետ, բ. պետք է լինել բարի եւ ազնիվ, միեւնույն ժամանակ անողոք չարի նկատմամբ: 4) ԱՄԿ-ի բարձրագույն ղեկավար մարմինը հանդիսանում է Գլխավոր խորհուրդը, որի որոշումները խստորեն պարտադիր են կուսակցության յուրաքանչյուր անդամի համար: 5) ԱՄԿ-ի բոլոր անդամները պարտադիր կերպով տալիս են իրենց նյութական օգնությունը՝ անդամավճարը, սահմանված չափով: 6) ԱՄԿ-ի յուրաքանչյուր անդամ անմիջականորեն ենթարկվում է իր խմբի ղեկավարին, որն ընտրովի է: Խմբի ղեկավարները հաշվի են առնում խմբի անդամների կարծիքը եւ խորհուրդները, բայց վճռական ձայնը պատկանում է խմբի ղեկավարին: 7) Խմբի ղեկավարները անմիջականորեն ենթարկվում են Գլխավոր խորհրդին: 8) ԱՄԿ-ի յուրաքանչյուր անդամից խստորեն պահանջվում է սրբությամբ պահպանել կուսակցության գաղտնիքները: Դավաճանության դեպքում կդիտվի որպես ազգի ու Հայրենիքի դավաճան: 9) ԱՄԿ-ի բոլոր անդամները, որոնք ընդունում են կուսակցության կանոնադրությունը եւ Ազգային Սրբազան Երդումը, պարտադիր կերպով ենթարկվում են ԱՄԿ-ի քաղաքական եւ գաղափարական գործունեությանը» (Հարությունյան Վ., Այլախոհությունը … 81-82):

Ազգային Միացյալ կուսակցությունը ծրագրին և կանոնադրությանը կից ուներ ***կուսակցության անդամի երդման տեքստ և արարողություն***, որը յուրաքանչյուր

մարդ, որը հավակնում էր անդամագրվել ԱՄԿ-ին, պարտավոր էր անցնել: Երդման տեքստի բովանդակությանը ծանոթանալիս ակնառու է դառնում ԱՄԿ-ականների նվիրական սերը հայրենիքի նկատմամբ, մարտական ոգին՝ հայ ժողովրդի ազատության և Հայաստանի անկախության վերականգնման պայքարի համար: Ստորև՝ ԱՄԿ երդման տեքստը. «Երկրի վրա երկնի մի կտոր, երկրային դրախտ, աստվածային տուրք - ոգով միշտ անմահ, հանճարով հզոր ու միշտ… տառապած, խոշտանգված, լլկված իմ Մայր Հայաստան, իմ սուրբ Հայրենիք: Դու, որ ինձ տվիր միս ու արյունդ, անմահ ու անեղծ Ոգին Հայկական, Աստվածային հանճարդ վսեմ, բյուր սերունդներիդ հրաշագործած Սուրբ Հողը տանջված, բայց միշտ փառավոր, այսօր տառապում ես նորից օտարի բիրտ կրնկի տակ: Մնվում է նա քո միս ու արյունով, անհունաթռիչ մտքովդ հզոր, հզորանալու, ոչնչացնելու Ոգին Հայկական: Քո հանճարեղ զավակներն իրենց Միտքն ու Արյունը տվին թշնամուն, տարված սին հույսով, գեթ խնայելու հայրենիքն իրենց: Արյամբ հղփացած ոսոխը, սակայն, չբավարարվեց լոկ այդ արյունով: Նա ցանկանում է Ոգին Հայկական արմատից պոկել, ցրել աշխարհում, Հայի անունը աշխարհից ջնջել: Դատարկ, սին հույսեր արյունածարավ բորենիների: Այդ չի հաջողվի: Ոգին Հայկական անմահ է, գիտցե՛ք: Այդ ասում եմ ես՝ Որդին Հայկազուն մի Աստվածային Սուրբ Ժողովրդի: Երդվում եմ ես քեզ, Ժողովուրդ հայոց, երդվում եմ անմեղ զոհերիդ արյամբ, քո զավակների Սուրբ գերեզմանով. քանի պղծում է իր ներկայությամբ Հայոց Սուրբ Հողը գեթ մի թշնամի, քանի ապրում եմ, քանի շնչում եմ, կպայքարեմ ես սրի դեմ՝ սրով, հրի դեմ՝ հրով, մահվան դեմ՝ մահով: Իմ կյանքը քոնն է, դու ես այն տվել, թե դավաճանեմ քո ազատության սրբազան գործին, թե ձեռքս դողա մահ տալ թշնամուն, ստոր ոսոխին, նենգ դավաճանին, անգամ դա լինի ՄԱՅՐՍ ՀԱՐԱՁԱՏ, թող նզովքը քո, Ժողովուրդ Հայոց ու Աստվածային զայրույթդ հզոր, տիեզերապիղծ ստոր արարքը պատժե մահով, քանզի ամենասուրբ մայրը ինձ համար դու ես, Հայաստան» (Հարությունյան Վ., Այլախոհությունը … 82-83):

Ազգային Միացյալ կուսակցությունը և Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարը՝ անկախ Հայաստանի պատմագիտական, հասարակական, քաղաքագիտական ընկալումներում

Սույն հոդվածում հանգամանալից ներկայացվեց և քննարկվեց, թե ինչ էր Ազգային Միացյալ կուսակցությունը և ինչպիսի նշանակություն ուներ Հայաստանի անկախության վերականգնման համար ընթացող պայքարում: Մանրամասնորեն քննարկվեցին կուսակցության հիմնադրման նախադրյալները, գործընթացը, ծրագիրը, կանոնադրությունը և երդման տեքստը: ԱՄԿ-ն զուգահեռվեց 17-20-րդ դարասկզբում ընթացող հայ ազատագրական շարժումների և դրանց ծրագրային գլխավոր նպատակների հետ:

Անկախ Հայաստանում պատմագիտական, հասարակական և քաղաքական շրջանակները արժանիորեն բարձր են գնահատում և հերոսականացնում 17-20-րդ դարասկզբի ընթացքում տեղի ունեցած ազատագրական գործընթացներն ու դրանց մասնակիցներին: Վստահաբար, այդ շարժումները, ծրագրերը պայքարի էջերով են հարստացրել են հայոց պատմությունը, որը անկախ երկրի սերունդների համար հպարտություն և պատասխանատվություն է:

Այնուամենայնիվ, խնդրահարույց է այն հանգամանքը, թե ինչպիսի վերաբերմունք և մոտեցումներ կան 20-րդ դարի երկրորդ կեսի ազատագրական շարժման և նրա մասնակիցների նկատմամբ: Երբ համադրում ենք 17-20-րդ դարասկզբի շարժումները 20-րդ դարի երկրորդ կեսին Խորհրդային Հայաստանում ծավալված ազատագրական շարժման հետ, տեսնում ենք, որ դրանք միմյանց փոխկապակցված պատմական շարունակություններ են: Այստեղ անհասկանալի է դառնում, թե պատմության և հասարակական-քաղաքական մտածողության մեջ ինչո՞ւ

է տարանջատված մինչև 20-րդ դարասկիզբ ընթացած ազատագրական շարժումը 20-րդ դարի երկրորդ կեսից ընթացած ազատագրական շարժումից: Ինչո՞ւ է հայ պատմագիտական միտքը հերոսական պատումներով ներկայացնում թուրքական և պարսկական իշխանությունների դեմ մղված ազատագրական շարժումները, բայց միևնույն ժամանակ աչքաթող անում ու լուսանցքային դարձնում Հայաստանի անկախության համար մղված պայքարը՝ ընդդեմ Խորհրդային կայսրության: Բացառիկ կարևորություն ունեն 17-20-րդ դարասկզբի ազատագրական շարժումները, որոնց մասին հայոց պատմության էջերում պետք է շարադրվի մշտապես, բայց, այնուամենայնիվ, Հայաստանի անկախ Հանրապետությունը հիմնադրվեց ԽՍՀՄ փլուզումից հետո, ուստի՝ օբյեկտիվ հիմքերի վրա է այն պնդումը, որ Խորհրդային Հայաստանում ծավալված ազատագրական շարժումը առնվազն ոչ պակաս կարևորությամբ և մանրամասնությամբ պետք է ներկայացվեր պատմության էջերում, ինչպես 17-20-րդ դարասկզբին ընթացող շարժումների դեպքում է:

Ազգային Միացյալ կուսակցությունը ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված առաջին հայկական կուսակցությունն է, որի գլխավոր նպատակը անկախ Հայաստանի ստեղծումն էր: Այս կուսակցության հիմնադիրներից առնվազն Շահեն Հարությունյանը տեսել Հայաստանի պետականության վերականգնումը և ապրել է անկախ Հայաստանում: ԱՄԿ-ի, նրան կից անկախության պայքարի մյուս կառույցների գրեթե բոլոր անդամները, ի դեմս Պարույր Հայրիկյանի, Ազատ Արշակյանի, Վարդան Հարությունյանի, Ռազմիկ Մարկոսյանի, Ռազմիկ Զոհրաբյանի, Անդրանիկ Մարգարյանի, ոչ միայն տեսել, այլ նաև իրենց հասարակական-քաղաքական գործունեությունն են իրականացրել անկախ Հայաստանում:

Հայաստանի անկախության վերականգնման համար մղված երկարատև և դժվարություններով լեցուն պայքարը, ԱՄԿ-ի դերն ու նշանակությունը պետք է սերունդներին ներկայացվեն ըստ արժանվույն, որպեսզի բոլորը իմանան անկախության գինը և այն մարդկանց մասին, որոնք իրենց ազատությունն ու կյանքն են զոհել հայ ժողովրդի ազատության և անկախ պետականության վերականգնման համար: Բոլոր այն ժողովուրդները, որոնք չեն արժևորում և առանցքային նշանակություն չեն հատկացնում անկախությանն ու անկախության համար պայքարի դուրս եկած մարդկանց, դատապարտված են կորցնելու սեփական երկրի անկախությունը՝ հայտնվելով նույն գաղութացված վիճակում, ինչից ազատվելու հնարավորություն էին ունեցել:

Եզրակացություն

Սույն հոդվածի քննարկմամբ եկանք այն եզրահանգումներին, որ թեև Խորհրդային Հայաստանում այլախոհական շարժումները ունեին տարբեր ուղղություններ, այդուհանդերձ, հայ հայրենասիրական շրջանակների կողմից այլախոհությունն առաջնային կերպով ընկալվեց և դրսևորվեց Հայաստանի անկախության վերականգնման պայքարով: Ազգային հարցերի կամ մարդու իրավունքների պաշտպանության համար պայքարը, թեև շարունակում էր պահպանել իր կարևորությունը, այնուամենայնիվ, Խորհրդային Հայաստանում այլախոհության հիմնական և առանցքային դրսևորումը անկախության շարժումն էր:

Հայկազ Խաչատրյանի, Շահեն Հարությունյանի և Ստեփան Զատիկյանի հիմնադրած Ազգային Միացյալ կուսակցությունն ամբողջացրեց մինչև այդ հայ հայրենասիրական շրջանակներում քննարկվող և տարածվող տրամադրությունները և ստանձնեց անկախության պայքարի կազմակերպման վեհ գործը: Այս կազմակերպությունը ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված առաջին կուսակցությունն էր, որի նպատակը Հայաստանի անկախության վերականգնումն էր:

Ազգային Միացյալ կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը և երդման տեքստը ցույց են տալիս, թե ինչպիսի գաղափարական ամուր հիմքերի վրա էին կանգնած հայ անկախական գործիչները, որոնք իրենց կյանքն ու ազատությունն են վտանգել անկախ Հայաստանի ստեղծման համար:

ԱՄԿ ծրագրում առաջ էին քաշված այնպիսի դրույթներ, ինչպիսիք տեղ գտան անկախ Հայաստանի սահմանադրության էջերում: ԱՄԿ-ն ԽՍՀՄ «երկաթե վարագույրներով» շրջապատված ոչ միայն պայքարի էր դուրս եկել Հայաստանի անկախության համար, այլ նաև կազմել էր անկախ Հայաստանի գաղափարախոսական հիմնական սյունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան, Ժոզեֆ. *Ես գնացի Կոմիտասի այգի (1966 ապրիլի 24)*, Բնօրրան հրատ., Երևան, 2005:
2. Խաչատրյան, Հայկազ. *անտիպ հուշագրություն, Սև գիրք*:
3. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ). ֆ. 1191, g. 20, գ. 5, թթ. 10-15:
4. *Հայոց Պատմություն*. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հատոր IV, գիրք երկրորդ, Ե., 2016:
5. *Հայոց պատմություն*, ԵՊՀ հրատ.,Ե.2012:
6. Հայրիկեան, Պարույր. *Իմ բանտային յուշերից, Գիրք Ա 1965-1973*, ԱԻՄ հրատ., Երևան, 2016:
7. Հարությունյան, Շահեն. «Այլախոհական շարժման առաջացման նախադրյալները Խորհրդային Հայաստանում 1950-60-ական թթ.», *Գիտական Արցախ*, № 4(19), Երևան, 2023:
8. Հարությունյան, Շահեն. *անտիպ հուշագրություն, ԱՄԿ հիմնադրում և կազմակերպում*:
9. Հարությունյան, Վարդան. *Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում*, Վան Արյան հրատ., Երևան, 2014:
10. ---. *Քաղբանտարկյալի պատմություն*, Հայկական ուսումնասիրությունների Անի հիմնադրամ հրատ., Երևան, 2022:
11. Հովհաննիսյան, Պետրոս. *Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես-XVIII դարի վերջ)*, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:
12. Алексеева, Людмила. *История инакомыслия в СССР: новейший период*, Моск. Хельсинк. Группа, Москва, 2012.

WORKS CITED

1. Aleksaeva, Lyudmila. Istoria inakomisliya v SSSR: noveshiy period Moskva, 2012. [History of Dissent in the USSR: the Modern Period, Moscow], (in Russian).
2. Avetisyan, Zhozef. Es gnatci Komitasi aygi (1966 aprili 24), Yerevan, 2005. [I went to Komitas Park (1966 April 24), Yerevan], (in Armenian).
3. Harutyunyan, Shahen, antip hushagrutyun. [Atypical Memoir], (in Armenian).
4. Harutyunyan, Shahen. Aylakhokhakan sharjman arajacman nakhadryalnery Khorhrdayin Hayastanum 1950-60-akan tvakannerin, Yerevan, 2023. [The Prerequisites of the Dissident Movement in Soviet Armenia 1950-70ss, Yerevan], (in Armenian).
5. Harutyunyan, Vardan. Aylakhohutyuny Khorhrdayin Hayastanum, Yerevan, 2014. [Dissent in Soviet Armenia, Yerevan], (in Armenian).
6. Harutyunyan, Vardan. Qaghbantarkyali patmutyun, Yerevan, 2022. [Story of a political prisoner, Yerevan], (in Armenian).

7. Hayastani azgayin arkhiv (HAA), f. 1191, c. 20, g. 5, t. 10-15. [Armenian National Archive (ANA)], (in Armenian).
8. Hayoc Patmutyun. Hator IV, girk erkrord Yerevan, 2016. [Armenian History, Volume IV, Book Two, Yerevan], (in Armenian).
9. Hayoc Patmutyun. Yerevan, 2012. [Armenian History, Yerevan].
10. Hayrikean, Paruyr. Im bantayin yusheric, Girk A 1965-1973, Yerevan, 2016. [From My Prison Memoirs, Book A 1965-1973, Yerevan], (in Armenian).
11. Hovhannisyan, Petros. Hay azatagrakan sharjumnery (XV dari kes-XVIII dari verj), Yerevan, 2010. [Armenian Liberation Movements (middle of the 15th century- end of the 18th century), Yerevan], (in Armenian).
12. Khachatryan, Haykaz, antip hushagrutyun. Sev girq [Atypical Memoir, Black Book], (in Armenian).

THE ESTABLISHMENT OF THE NATIONAL UNITED PARTY AND ITS FUNCTION AND IMPORTANCE IN ARMENIAN SOCIETY DURING THE 1960S–1980S DISSENT MOVEMENT

SHAHEN HARUTYUNYAN
Yerevan State University, Department of History,
Chair of the History, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

Dissident groups started to emerge in the USSR in the 1960s and later extended to Soviet Armenia. There, dissidents expressed their opinions in three main ways. But the fight for Armenia's independence to be restored was at the heart of the dissident movement. Following the completion of the concepts debated in Armenian patriotic circles, the National United Party was created in 1966 and assumed leadership of the campaign for the liberation of Armenia and the restoration of statehood. It was of extraordinary international importance across the USSR, not only in Soviet Armenia.

The article's goal is to thoroughly examine and discuss the National United Party's contribution to the fight for Armenia's independence at that time.

To achieve the goal, the task was to study and discuss the background of the founding, the process, the Program and the Charter of the United National Party.

The study was conducted using historical, historical-comparative methods. Content analysis of state documents, archival materials was carried out.

It was argued that the independence movement that emerged in Soviet Armenia was a natural ideological continuation of the Armenian liberation movements of the 17th-19th centuries, now directed against the Soviet empire in the 20th century.

The conclusion drawn is that the independence movement in Soviet Armenia, along with the establishment of the United National Party for its organization, represented a continuation of the national liberation movements that had occurred in previous centuries, ultimately culminating in a successful outcome.

Keywords: *dissent, USSR, independence, «National United Party», national problems, Moscow domination, liberation movement, Armenia's liberation plan.*

СОЗДАНИЕ НАЦИОНАЛЬНОЙ ОБЪЕДИНЕННОЙ ПАРТИИ, ЕЕ ФУНКЦИИ И ЗНАЧЕНИЕ В АРМЯНСКОМ ОБЩЕСТВЕ В ПЕРИОД ИНАКОМЫСЛИЯ В 1960–1980-ЫЕ ГОДЫ

ШАГЕН АРУТЮНЯН
соискатель кафедры истории
исторического факультета
Ереванского государственного университета
г. Ереван, Республика Армения

Диссидентские группы начали возникать в СССР в 1960-х годах, затем они распространились и в Советской Армении, где убеждения диссидентов развивались в трех основных направлениях. Однако борьба за восстановление независимости Армении была в центре армянского диссидентского движения. После окончательного формирования концепций, обсуждавшихся в армянских патриотических кругах, в 1966 году была создана Национальная объединенная партия, которая взяла на себя руководство кампанией по освобождению Армении и восстановлению государственности, что имело большое значение не только для Армении, но и для СССР в целом.

Цель данной статьи – детально рассмотреть и обсудить вклад Национальной объединенной партии в борьбу за независимость Армении того времени.

Задача исследования заключалась в том, чтобы изучить и обсудить основные положения, стратегию, устав и деятельность Национальной объединенной партии.

В ходе исследования был использован историко-сравнительный метод. Контент-анализу были подвергнуты архивные ресурсы и правительственные документы. В статье утверждается мнение о том, что движение за независимость, сформировавшееся в Советской Армении 20 века против гегемонии Советов, было логическим идеологическим продолжением армянских освободительных движений в 17-19 веках.

Таким образом, движение за независимость в Советской Армении и созданная для его организации Национальная объединенная партия стали продолжением национально-освободительных движений, развернувшихся в различные исторические периоды, и добились победного результата.

Ключевые слова: *инакомыслие, СССР, независимость, «Национальная объединенная партия», национальные проблемы, московское господство, освободительное движение, план освобождения Армении*.